

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԵՓԱՅ ԶԵՐԲԷԶԵԱՆՅ

ԱՌ ԲՈՂՈՔ

Պ. Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Ի Ն Ա Ջ Ա Ր Ե Ա Ն Յ

(Նարայարութիւն. Տես էջ 247.)

6. «Քրիստոնէութեան հիմնադիրը կարգել է Մկրտումիւն ու Հաղորդութիւն» (Վարդապ. Եր. 53). Ուրեմն մնացած հինգ խորհուրդը՝ Դրոշմ, Ապաշխարութիւն, Պսակ, Ձեռնադրութիւն եւ Վերջին օծումն՝ քրիստոսադիր չեն: Լա՛ւ մտածիր, Հայոց ազգ, արդեօք քո եկեղեցին այդպէ՞ս է ուսուցանում: Նազարեանցը յայտնապէս քարոզում է երկու եկեղեցական խորհուրդ՝ Լուտերի ուսմանը համեմատ, եւ բարկանում է մեր վերայ որ մեր Լուտերամիտ ենք ճանաչում նորան. եւ այդպատճառով մեր գրուածները հայհոյանք է կոչում, որպէս եւ մին քանի Սաղաներ եւս հաստատում են նորա խօսքը: Այդ բաւական չէ, այլ եւ

7. եկեղեցական խորհուրդների մեր ընդունած եօթնաթիւը կոչում է *քիւր վարդապետութիւն*, ասելով. «Լուտերը սկսեց աւելի խորամուխ լինել սուրբ գրքի մէջ, եւ նորա լուսովը քննելով ճանաչեց մի հոռմէական *քիւր վարդապետութիւն* միւսի քամակից, զոր օրինակ եկեղեցու եօթն խորհրդի մասին» (Հանդէս նոր հայախօսութեան, 2 մասն, Եր. 232. տ. 36—39): Եթէ *քիւր* է հոռմէական եկեղեցու վարդապետութիւնը խորհրդների եօթնաթիւի մասին, ուրեմն *քիւր* է եւ մեր հայկականը, որ ընդունում է նոյն եօթն խորհուրդը:

8. Լուտերին կոչում է «Պարգեւական գործի նախախնամութեան եւ բարերար ո՛չ միայն իւր հայրենիքին, այլ եւ բովանդակ աշխարհին» (Հանդէս նոր հայախ. Եր. 243. տ. 28—31): Ուրեմն Լուտերը բարերար է եղել եւ մեր Հայոց աշխարհին, կամ կարող է լինել, եթէ միայն Հայերը իւրեանց կամակորուժեամբ չհակառակէին ընդունել նորա բարերարութիւնը, կամ հասկանային նորա լուսաւոր գաղափարները, որպէս հասկացել է եւ ընդունել է ինքը Սաղայի եւ Թիւթիւն՝ Տի Ակոբի հետ:

9. Լուտերի հնարած աղանդը կոչում է *մաքուր քրիստոնէական ուսումն*, *մաքրած հաւատ*, *մաքուր վարդապետութիւն* (տասն տեղ եւ աւելի նոյն Հան-

դէս նոր հայախօսութեան ասած գրքումը): Կասէք թէ հարիւր ապացոյց պէտք էր բերէինք, որ կարողանայինք հասկացնել հիւանդամիտ մարդկանց, թէ նազարեանցը եւ նորա հետ մին քանի Սաղաներ, Լուտերական են սրտով եւ զգացմունքով, եւ միայն անունով են Հայ, Հայերին խաբելու համար:

10. Պատարագի վերացումն կոչում է հիմնաւոր դաստիարակութիւն, [ճշմարիտ հաւատ եւ Աստուծոյ բան, ասելով, «Շվիաքիայումը երեւեցաւ Յովհաննէս Բրինցը, իբրեւ առաջինը Բէֆօրմատորներէց մինը, եւ 1825 թուականին ահա Շվեդիշիայլ քաղաքումը վերացրեց պատարագ եւ նորա հետ կից արարողութիւնքը, թէպէտ յառաջուց հիմնապէս դաստիարակելով Ժողովուրդը ճշմարիտ հաւատի մէջ» (Հանդէս նոր հայ. Եր. 255. տ. 20—24): «Բայց միւս տարի Աստուծոյ բանը քարոզվեցաւ նոյն իսկ քաղաքի մէջ» (տ. 18.):

11. Լուտերի այն գիրքը, ուր նա գրում է պատարագին ընդդէմ, կոչում է *նոգելից գրութիւն* (Հանդէս նոր հայախ. Եր. 237. տ. 36—39), եւ Լուտերի աղանդով խմորված՝ ասում է, «Քահանայի օրհները եւ ճաշակելը հաց ու գինին չէ՛ պատարագ եւ ո՛չ բարեգործութիւն. այլ եւ այն նորա հնար ուսումը, որպէս թէ հացը եւ գինին նիւթապէս փոխարկուում էին, կամ թէ ճշմարիտ կապակցութիւն սրբած հացի եւ տէրունական մարմնի մէջ հաւատալ, այդ բանը Թողած է հաւատաւորի ազատ կամքին»:

12. Ասում է, «Հայերը ծնունդն Աւետարանի ուսումն. բայց Աւետարանի ուսումն ծնել կամ անտես առնել, որ պապերի եւ *միւսերի* խօսք ու կամք յառաջանայ, այդ բանին հոգով եւ մարմնով ընդդէմ է հեղինակը» (Հանդէս նոր հայ. Եր. 233): *Միւսեր* ասելովը պէտք է իմանանք Հայերին. որովհետեւ պապերին յիշում է առանձնակի. իսկ աւետարանականներին չէր կարող հասկանալ այս տեղ, վասն զի նորա բոլոր

խօսածը աւետարականների կողմն է, եւ ինքը եւս աւետարանական է, որպէս կոեսանենք ցածուր: Ձեր նախնիքը, կամ դուք, Հայեր, ե՞րբ, կամ որո՞վ էք ծնել Աւետարանը, քննեցէ՛ք:

13. Սուրբ Աստուածածնին կոչումէ *Քրիստոսամայր*, եւ ո՛չ թէ Աստուածամայր. (Հանդէս Նոր հայախ. եր. 256. տ. 3—7), այսպէս խօսելով՝ «Ուրիխ Զվինգլին, որպէս քահանայ էյնզիգելն քաղաքի, տեսնելով որ ժողովուրդը բազմութեամբ դիմումէ պաշտօն մատուցանելու այն տեղի Քրիստոսամօր հրաշագործ պատկերին, վաղուց ահա քարոզել էր ընդդէմ՝ ուխտագնացութեան եւ աստուածապէս պաշտելուն սուրբ կոյսն Մարիամ»: Սուրբ Աստուածածնին *Քրիստոսամայր* էր կոչում՝ Նեոտոր, որովհետեւ իւր չարաչար բաժանման մտքով՝ չէր ձանաչում Քրիստոսին Աստուած, վասն որոյ եւ նորա ծնող մօրը կոչումէր քրիստոսամայր եւ ոչ աստուածամայր: Պրոտեստանտները ընդունումեն նոյն մոլորութիւնը, եւ նազարեանցը, նոցա գաղափարներով լուսաւորւած վարդապետը, կրկնումէ նոցա բառը *Քրիստոսամայր*, որ հակառակ է քրիստոնէական ուղղափառ դաւանութեան:

14. Մեր ազգի հաստատուն մնալը իւր հայրապետների կանոնադրութիւնների վերայ յայտնապէս արհամարհումէ եւ մերժումէ, ասելով, «Հայերը (կարծումեն) որպէս թէ իւրեանց ընտանի տգիտութեան մէջ պահպանելով ազգը, կպահպանվէր եւ եկեղեցին, հաստատ մնալով իւրեանց հայրապետների դիրքի ու կարգերի վերայ» (Հիւսիսափայլ օրագրի 3 ամսատ. 1861 թ.): Հայ եղբայրներ, ահա մեր հայրապետների դիրքը եւ կարգը պահպանելու վերայ բացայայտ բառերով ծիծաղումէ՝ նազարեանցը եւ յետոյ բարկանումէ մեր վերայ որ նորան Լուտերական ենք կոչում. Լուտերական լինելը ո՞րն է ապա. ո՞չ ապաքէն Լուտերականները հերքումեն ու մերժումեն բոլորովին հայրապետների դրած կարգերը եւ կանոնները:

15. Ասումէ՝ «Պսակը պիտոյ է խզել, եթէ նորա շարունակութիւնը այլ եւս կարելի չէք» (Վարդապետարան կրօնի, եր. 102): Մեր եկեղեցին քարոզումէ պսակը անխզելի, աւետարանի բանի վերայ հիմնուած, «Ձոր Աստուած գուգեաց, մարդ մի՛ մեկնեցէ» (Մատթ. ԺԹ. 5): Նազարեանցը հրամայումէ խզել պսակը, որովհետեւ Լուտերականները խորհուրդ չեն համարում ամուսնութիւնը: Գո՞մ էր մտաք, յետոյ այն յանձնա՞յնք որ

16. Հայոց եկեղեցու կենդանութիւնը կոչումէ *մնացած ու մաշված*. (Հիւսիսափայլի 10 ամսատ. 1860 թ.): Համաձայն ես այդ բանին, Հայոց ազգ:

17. Ասումէ՝ «Հայոց եկեղեցին պիտոյ է մի րէֆօրմ առնէ՝ ոտքից մինչեւ գլուխ» (նոյն տեղ). Լուտերը նոյնպէս րէֆօրմ արեց իւր (լատինական) եկեղեցու մէջ՝ միայն գլխից մինչեւ ոտք. արդեօք ի՞նչ պետք է սորանից աւելի, որ նազարեանցը խոստովանուի թէ լուտերական է գլխից մինչեւ ոտք:

18. Մեր եկեղեցու մէջ ուրանումէ երանութիւնը, ասելով, «Այնուհետեւ (այսինքն եկեղեցու վերանորոգութիւնից յետ) ոչ մի հայ տեղիք ունենալու չէ՝ վազելու օտար եկեղեցի, որովհետեւ նոյն *երանութիւնը*, որ խնդրումէր նա օտարի եկեղեցու մէջ, կունենայ արդէն իւր մայրենականի մէջ» (նոյն տեղ): Տեսէ՛ք, լուսաւորչակրօն հայ եղբայրներ, թէ ի՞նչ է դուքս տամ՝ բերանից մեր մոլորուած լուտերահայ վարդապետը. նորա ասելովը, այժմ՝ քանի որ րէֆօրմ չէ եղած՝ դեռ եւս՝ մեր եկեղեցումը երանութիւն չկայ, որ է հոգու փրկութիւն, որ լինումէ Յշմարիտ հաւատով եւ բարեգործութեամբ. իսկ երբ որ րէֆօրմ կլինի, այն ժամանակ երանութիւն եւս կլինի մեր մայրենի եկեղեցումը. ընդունո՞ւմ էք այդ բանը, կամ կարելի՞ է որ ընդունէք:

19. Վերջապէս իւր սեփական բերանով արտասանումէ հրապարակի մէջ իւր սրտի խոստովանութիւնը, թէ նա աւետարանական է, ասելով, «Հեղինակը չէ՝ ոչ լուտերական եւ ոչ պապական, այլ առողջամիտ ընտղ ու զննող քրիստոնեայ, որի հաւատը նոյն է՝ ինչ որ ուսուցանումէ Յիսուսի Քրիստոսի Աւետարանը»: (Հանդէս Նոր հայախ. եր. 233. տ. 18—20): Ատցէ՛ք խնդրեմ, ի՞նչ հաւատ ունի նազարեանցը, եթէ ոչ լուտերական է եւ ոչ պապական եւ չէ՝ ասում եւս թէ Լուսաւորչական է, այլ միայն Աւետարանը ընդունող, ո՞չ ապաքէն ուրեմն *Աւետարանական* է հաւատով, որ մի եւ նոյն է ինչ որ *լուտերական*: Սադան եւ թիւնիւն՝ թիւն թիւն եւս գլխեն այդ բանը:

Իտնական Առաքեալ Արարատեանը ցոյց տալով նազարեանցի կրօնի վարդապետարանին սրտալանքը մանրամասնաբար, այսպէս է վերջացում իւր գեղեցկախօս քննութիւնը. «Մանկունք «մեր... ցաւելով տեսցեն ի մմա (այսինքն ի վարդապետարանի) զգանազանութիւն եւ երեւելիան. «համեմատութիւն բանից եւ իմաստից ի հին եւ ի

«նոր կտակարանս, յապաւումն եօթն խորհրդոց
«եկեղեցւոյ, զանյիշատակութիւն բարեխօսութեան
«Սրբոց, զինստուան սովորութեան զոհագործու-
«թեան մերոյ եւ յայտնի ապախտաւորութիւն ըզ-
«կիւրակէիւք, զտէրունական տօնիւք եւ զսրբովքն
«Աստուծոյ, զյարգութեամբ խաչի, զատկերաց,
«զերկրպագութեամբ, զծնրադրութեամբ եւ ըզ-
«սաղիովք»:

Կարդացէ՛ք մտադրութեամբ, մեր հարազատ
հայ եղբայրներ, վերուումը մեր կողմից նշանա-
կած նազարեանցի պարտաւորութեան հատուած-
ները եւ մերազնեայ ուսումնականների զանազան
ժամանակ տպագրած քննութիւնները, մի՛ մոռա-
նաք եւ այն նշանաւոր հանգամանքը այդ բա-
նում, որ մեր եկեղեցու աստուածքնտիր Գլուխը
եւ Սրբազան Սինոդը էջմիածնի երկարատեւ եւ
օրինաւոր քննութիւնից յետ՝ հերքել են եւ մեր-
ժել են պարոնի գրուածները աստուածատուր եւ
կայսերապարգեւ իշխանութեամբ. եւ յետոյ ե-
րեւակայեցէ՛ք ձեզ այն անամօթ, անսպաւական եւ
միայն . . . ոց պատկանաւոր համարձակութիւ-
նը, որով նազարեանցը մին անմեղ մարդու նման
դատաստան է խնդրում բոլոր ազգից, նոյն ազ-
գի հաւատը յայտնապէս խոնակօխ առնելուց յետ:
Սինոդական վճռահատութիւնից յետ, նազա-

րեանցի հրապարակական նամակը, որով խնդրու-
մէ նա դատաստան բովանդակ ազգից, ամենայն
խոհական եւ հարազամիտ Լուսաւորչական Հայի
սէտք է պատկերանայ իբրեւ իսկական բողոքա-
կանութիւն ընդդէմ Բարձրագոյն Հոգեւոր իշխա-
նութեան, եւ իբրեւ մին վճռական հրաւեր, որ
մինչեւ այժմ ծածուկ պահուածը դուրս գայ հը-
րապարակ, որ լուտերական մօքերով վերանո-
րոգուած մարդիկ հանդէս հանեն իւրեանց ա-
նունները. եւ մեք շատ կցանկայինք որ այդպի-
սի անձինք օրով յառաջ յայտնուէին եւ որոշուէ-
ին հարազատ լուսաւորչական Հայերից: Դո՛ւրս
եկէք ուրեմն հանդէս մին քանի Սաղաներ, Ղու-
կասեան, Ալիշանեանց, եւ ձեզնմանները. առանց
մեկնութեան եւ առանց դատաստանի գրեցէ՛ք
ձեր պայծառ անունները բաժանման Թղթագրի
վերայ, ուր առաջին ստորագրողը եղել է Թիւ-
թիւնցի Ակոբը, բանը վճռած է արդէն. կամ
Հայաստանեայց եկեղեցու կողմը, կամ նազա-
րեանցի եւ Թիւթիւնցի Ակոբի բովը. большому бо-
гу, а спасенному рабъ. եւ մեր կասենք ձեզ համար
միայն այս. «եկին ի մէնջ, բայց ո՛չ էին ի մէնջ»:

30 Հոկտ. 1861:

Իմ պատուական Հայոց ազգին
Անձնանուեր Խ. յետին ծառայ
ՅՈՎ.ՍԷՓ ԶԵՐԳԵԱՆՑ:

Ծ Ի Ա Ծ Ա Ն

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԱՆՑԻՅ.

Թուրինի մէջ նոյեմբերի 20-ին իտալա-
կան խորհրդարանը բացուեր է: Պարոն Ռի-
քարդոլին ատենախօսութիւն մը ըրեր է, յո-
րում բացատրեր է իւր միտքը թէ ինչ կեր-
պով կարելի է միաբանել հաւատքը ազատու-
թեան հետ եւ իտալական թագաւորութիւնը
հռովմէական եկեղեցւոյ հետ: Նորա կարծի-
քն այս է թէ շատ կարելի է պապին ձեռ-
քէն աշխարհական թագաւորութիւնը առ-
նուլ, եւ ունեցած եկեղեցական իշխանու-
թիւնը ամբողջ պահպանել. այս բանիս ա-
մէն միջոցները ցուցնելէն ետքը այս ալ
կաւելցնէ թէ իտալացիք որ հռովմ կուզեն
իրենց թագաւորութեանը մայրաքաղաք՝ ու-
րիշ կերպով անկարելի է հանգարտին:

Պ. Ռիքարդոլին առաջարկութեանը հետ կայ
եղեր նաեւ մէկ նամակ մը առ պապին, մէկ
նամակ ալ առ Անթոնէլլի կարդինալը. մի-
անդամայն Փարիզ կեցող իտալական դեու-
պանին գրուեր է որ Գաղղիոյ տէրութենէն
խնդրէ այն թղթերը պապին յանձնելու աշ-
խատանքը:

Ահա այս կերպով իտալիոյ թագաւորու-
թեան գլխաւոր օստիկանը կաշխատի որ իտա-
ղաղութեան ճամբով վերջնայ այն մեծ
խնդիրը, եւ Գաղղիոյ տէրութեան միջնոր-
դութիւնը կխնդրէ. վասն զի շատ աղէկ գի-
տէ որ եթէ այսօր գաղղիացի զօրքերը ել-
նեն Հռովմէն, այսօր պապին աշխարհական
իշխանութիւնն ալ կդադրի: Բայց թէ նա-